

մնում էր անբաժան, որպէս ընդհանրութեան սեփականութիւն: Համայնական հոգը կամ միացած ուժերով էին մշակում, կամ որոշ համաձայնութեան դաշով, իրենց մէջ բաժանում էին և առանձին մշակում: Բայց այդ բաժանումը մշտական չէր և հոգը դարձեալ կազմում էր ընդհանրութեան սեփականութիւնը: Նոր ժամանակներում հին սովորութիւնը վերացել է. վարելահոգերի բաժանումը գոնէ դարձել է վերջնական, մինչդեռ խոտատեղիները, մարդադետիւնները, արօտները մնացել են որպէս ընդհանրութեան սեփականութիւն:

Ընտանեկան այս տեսակ բաժանումներից է ծագել հաւանօրէն Անդրկովկասի շատ կողմերում տարածուած համայնական հողատիրութիւնը: Այս մասին յետոյ խօսք կըլինի:

2. Մօտակիան

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Պօտապենկօ «Ոսկի շփաղամ».

Փոխադրութիւն Յակովբ քահ. Սառիկեանի, Թիֆլիս, 1910, տպարան Օր. Ն. Աղանեանի, 93 էրես գինը՝ 25 կոպէկ:

Դրքոյկի սիւժէն՝ նախանձն է, որին ընկերներից մէկը դէմ է դնում իր... մեծահոգութիւնը: Գիմնադիպի VIII դասարանի վերջին հարցաքննութեանը, աշակերտներից մէկն իր կաշուից դուրս է գալիս, որ ինքն ոտանայ ոսկէ շքադրամը, և ոչ՝ իր ընկերը, որ, սակայն, աւելի՛ իրաւունք ունէր ստանալու: Ու վերջինը զիջում է իր ընկերին:

Թէ ինչքան աջող է փոխադրել Սառիկեան քահանայն, ոչինչ չեմ կարող ասել, քանի որ ձեռքիս տակ չունեմ բնագիրը, մանաւանդ, որ սովորաբար փոխադրողն աւելի է ազատութիւն տալիս իրան, քան թարգմանողը:

Մի քանի նկատումներ: Ինձ մնար, ես կթարգմանէի «Ոսկէ մեղաք», որովհետեւ դա ամենքին հասկանալի է. իսկ հանդիպած առաջին տեղում կիսակազմէի՝ շքադրամ:

Ննչաւոր առարկաների մօտին խօսելիս չի կարելի ասել բոլորը, այլ՝ ամենքը (Եր. 17): Անտեղիօրէն խօսքը չպէտք է սկսել իսկ բառով:—Իսկ ես դասից եմ փախել... (25): Փայլուն պատասխանել, փայլուն ընդունակութիւն ունի,—հայեօրէն չեն (63, 11): Ասում ենք՝ շատ լաւ (հիանալի) է պատաս-

խանութ, մեծ ընդունակութիւն ունի:—Երկրաչափութիւնը այնքան լաւ դիտէ (շատ լաւ գիտէ) (82): Ոչ, Վասիլիսոս, ես այդ խնդրում եմ: Այդ ջղային լինելուցն է (13, 14): Այս դէպքերում դերանունն աւելորդ է: Ես այդ հասկանալ չեմ կարող (79):—Ձեմ կարողանում: Նա թերթում էր խնդրագիրը (прошение) (65): Ուղեցել է ասել՝ խնդրներէ հաւաքածուն (задачник): Ո՛չ թէ՛ աղաւնեակս (голубчик), այլ՝ սիրելիս (47): Աւելի աշխոյժ, աւելի աշխոյժ ասեց ուսուցիչը: Մի քիչ աշխոյժ, մի քիչ աշխոյժ (71): Նախ՝ որ ընկերս է ինձ սպասում: Նախ՝ որ ընկերս սպասում է ինձ (62): Առաջ նա ոչինչ չուէր, որ ինքը երկրորդն է: Առաջ նա դէմ չէր, . . . (32):

Հետեւեալ նախադասութիւնն ուղղակի անհասկանալի է: Եթէ այդ մրցանակը քեզ հեշտ յաջողութիւն էր, ես ոչինչ չէի ունենալ, բայց առողջութեան գնով . . . ո՛չ, այդ հարկաւոր չէ (9):

Իմ կարծիքով, կամ պէտք էր ասել՝ առողջութիւնը վնասելու գնով. կամ՝ հիւանդանալու գնով: Յամենայն դէպս, չէր կարելի ասել՝ «բայց առողջութեան գնով», ոչ, այդ հարկաւոր չէ»:

. . . նրան դրաւում էր նկարչական տետրակը, վրձինն ու ներկերը, որոնք նուէր էր ստացել . . . պառաւից, որ գնահատում էր իր ազգակցի նկարչական շնորհքը, որ մատիտով . . . նկարում էր . . . (29):

Առաջին՝ նրան գրաւում էին, ո՛չ թէ՛ դրաւում էր: Երրորդ՝ պէտք էր արտայայտել երկու նախադասութիւնով, քանի որ անտանելի է դերանունը յաճախակի կըրկնութիւնը:

Ո՛չ թէ՛ «Այ, վրադ պիտի ջարդեմ այսօր», այլ՝ Ա՛յ քիթ ու պոռնիկդ ջարդելու եմ (75):

Սերթուկն ընկած էր լինում սեղանի, տակ, իսկ տետրակները՝ մահճակալի (28):

Տիպը մաքուր է. գինը՝ էփան:

Իմ կարգացած փոխադրութիւն-թարգմանութիւններէ միջև սա մէկն է այն դրօշակներէ, որոնք, համեմատաբար, աւելի են հայերէն, քան միւսները: Այս պատճառով չեմ կարող չյանձնարարել «Ոսկէ շքադրամը» մեր պատանիութեանը և գրադարաններին:

Խրախուսելի է և՛ հրատարակող Ա. Վ. Դէյկարխանեանի ձեռնարկութիւնը:

Է. Ք. Ն.